բեկամ պէտք չէ ունենամ՝ բաց 'ի Աստուծմէ. 'ի նմա զիրար տեսնանք: Ե՛րթ խաղաղութեամբ, բարեսիրտ օտարական, երջանիկ եղիր . . . : Ողջոյն մշտնջենաւոր հրաժեշտի առ քեզ,,: Ճանապարհորդը դուրս ելաւ. Բորոտը գոցեց դուռն ու փակը դրաւ :

ՔՍԱՎ · ՏԸ ՄԷՍՏՐԸ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Յանոսի կամարը :

Սեպտիմոս Սեւերոս հռոմէական կայսրը, որ Քրիստոսի 193 թուականին ընտրուած է 'ի կայսրութիւն և մեռած 211 տարւոյն, ուրիշ խել մը նախորդ կայսերաց օրինակին հետեւելով՝ կը ջանար միջակ աստիճանի ժողովուրդն և ռամիկը իրեն շահելու, և այս դիտմամբ շինել տուաւ նաև Յանոսի կամար ըսուած շէնքը Հռոմայ Վելաբրոյ հովտին մէջ՝ նոյն տեղւոյն սեղանաւորաց և վաճառականաց դիւրութեանն համար: Որովհետև սովորաբար 'ի Հռոմ գործողութիւնները հասարակաց հրապարակներու մէջ կը տեսնուէին, անոր համար այս տեսակ շէնքերն՝ որ վաճառականաց իբրև ժողովուելու տեղ և իբրև ապաստանարան կը ծառայէին, բազմաթիւ էին քաղաքին մէջ:

Քառակուսի ձեւով է այս յիշատակարանը. իւրաքանչիւր երեսը ձեւացած է բարձր կամարով մը ու երկու կողմնական որմովք, որոնք կը հանգչին հողուն մէջ խորունկ տնկուած խարսխի մը վըրայ: Ընդ մէջ խարսխին և շէնքին գագաթին վրայէ վրայ երկու կարգ խորշեր բացուած էին, և խոյակով մը վարինները վերիններէն կը բաժնուէին: Այսօրուան օրս սիւներուն հազիւ թէ հետքը կը տեսնուի. ուրիշ մասերը ընդհանրապէս բաւական աղէկ պահուած են: Սեպտիմոսի Սեւերոսի դարուն գեղարուեստք ինկած էին Հռոմայ մէջ, 'ի վերայ այսր ամենայնի Յանոսի կամարին տեսքը վեհ է ու հաճոյական. սիւներն ու խորշերուն զարդերը միայն պակասաւոր էին:

Թէպէտ այս յիշատակարանը, որ թէ յաղթական կամարի և թէ մահարձանի կը նմանի, Janus կամ Arcus Quadrifrons Janus կոչուած է, բայց ըստոյգ չիմացուիր թէ արդեօք ինչ պատճառաւ այս անունն առեր է՝ երբոր մըտածենք թէ ինչ բանի կը ծառայեր: Իտալիոյ թագաւորաց հնագոյնը այնպիսի ստորոգելիք մը չունէր՝ որով վաճառականաց հետ վերաբերութիւն մը ունենար: Երկդիմին, կամ քառադիմին Յանոս պատերազմի կամ խաղաղութեան աստուածն էր, որովհետև իր տաճարը պատերազմ սկսածին պէս կը բացուէր և երբ լմննար՝ կը գոցուէր. էր նաև աստուած դրանց և ճամբաներու, աստուած օրուան, տարւոյ, աստուած եղանակաց. բայց ոչ երբէք առեր էր Հերմէսի՝ վաճառականութեան աստուծոյն ձեռքէն անոր պաշտօնը: Իրաւցընէ շատ տաճարներ կանգնուած էին իրեն 'ի Հռոմ՝ Quadrifrons Janus անուամբ. բայց անոնց մէջ իբրև եղանակաց աստուած կը պաշտէին զինքը, և այս տաճարաց ամէնն ալ չորս երեսով էին, որոնց իւրաքանչիւրը դուռ մը ու երեք պատուհան ունէր: Իւրաքանչիւր երեսին դուռը եղանակաց մէկուն խորհրդական պատկերը կը ներկայացընէր, և իւրաքանչիւր պատուհան ալ նոյն եղանակին երեք ամիսներէն մէկուն պատկերը: Ասոր համար աւելի հաւանական է կարծելը թէ որովհետև 'ի Հռոմ տեղ տեղ փողոցներու և նոյն իսկ հրապարակներու մէջ յաղթական կամարի նման բարձր կամարներ կը գտնուէին, որոնց տակէն կ'անցնէր հասարակաց ճամբան, և որոնք Janus կը կոչուէին, թերևս այս յիշատակարանին Quadrifrons Janus անուամբ կոչուած ըլլալը ոչ եթէ եղանակաց աստուծոյն նուիրուած ըլլալուն համար էր, այլ չորս Janusով կամ կամարով ձեւացած ըլլալուն համար:



Ցանոսի կամարը

Եղանց վաճառականները, սեղանաւորք, և մանաւորապէս ոսկերիչք ուզելով իրենց երախտագիտութիւնը ցուցնել Սեպտիմոսի Սեւերոսի այնպիսի օգտակար ծառայութեան մը համար որ իրենց ըրեր էր, պզտիկ յաղթական կամար մը կանգնեցին իրեն՝ եղանց վաճառատեղւոյն ծայրը։ Այսպէս շինել տրուած յիշատակարանը՝ որովհետև օգտի համար կանգնուած էր, պարզութեամբ կը փայլեր. իսկ վերոյիշեալ հռոմայեցւոց վախճանն ուրիշ ըլլալով՝ մարմարիոնէ շինել տուին իրենց յիշատակարանը, և արտաքոյ կարգի ճարտարապետութեամբ մը յօրինելով՝ տգեղ քանդակներով ու զարդերով ալ ծածկեցին զայն։